

ՀՀ ԳԱԱ-ն կոչ է արել իր միջազգային գործընկերներին հորդորել իրենց երկրներին՝ ճանաչել Արցախի անկախությունը

Ամենուր մահ ու ավեր, այստեղով թուրքեր են անցել:

Վիկտոր ՀՅՈՒԳՈ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան (ԳԱԱ) դիմել է միջազգային գիտական համայնությանը՝ կոչ անելով դատապարտել Արցախի (Լեռնային Ղարաբաղի) ժողովրդի դեմ Ադրբեյջանի և Թուրքիայի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմը և հորդորել՝ ճանաչելու Արցախի Հանրապետության անկախությունը իրենց երկրների կողմից: Շեշտելով, որ ուղերձի հիմքում ընկած են միայն հումանիստական մոլորներ, ՀՀ ԳԱԱ-ն Արցախի Հանրապետության ճանաչումը դիտարկում է որպես Արցախի խաղաղ բնակչության դեմ իրականացվող ծանր հանցագործությունները կասեցնելու և թուրքերի կողմից իրականացված ցեղասպանությունից մեկ դար անց նոր ցեղասպանության իրականացումը բացառելու միակ հնարավոր միջոց:

Ուղերձում մասնավորապես նշված է. «Շարունակվում է Թուրքիայի և Ադրբեյջանի սանձազերծած ահաբեկչական պատերազմը Արցախի (Լեռնային Ղարաբաղի) և իր խաղաղ բնակչության դեմ: Անտեսելով հրադարարի հորդորները և բացա-

հայտ հայտարարելով, որ իրենց վերջնական նպատակը Արցախը հայաթափելն է՝ թուրքա-ադրբեյջանա-ահաբեկչական վարձկանների դաշինքը շարունակում է հարձակումը Արցախի վրա՝ օգտագործելով միջազգային նորմերով արգելված տարբեր տեսակի ռումբեր ու սպառազինություն, մի քանի հազար հատուկ ջոկատայիններ Թուրքիայից և Պակիստանից, ինչպես նաև վարձկան-ահաբեկիչներ Սիրիայից:

Արցախում չի մնացել գեթ մեկ գյուղ, որ հրթիռակոծված չլիներ: Կան հարյուրավոր զոհեր ու վիրավորներ քաղաքացիական բնակչության շրջանում:

Զնայած բարձր մակարդակով հրադարարի վերաբերյալ փաստաթղթի տակ ստորագրելուն՝ Ադրբեյջանը ոչ մի վայրկյան հավատարիմ չմնաց իր պարտավորություններին:

Արցախի և ամբողջ հայ ժողովուրդը համառ ու անձնագոհ դիմադրություն են ցուցաբերում, սակայն Ադրբեյջանը, օգտվելով նաև ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի սպառազինությունից, շարունակում է իր բարբարոսությունները:

Ստեղծված պայմաններում Արցախի միջազգային ճանաչումը կարող է լինել տարածաշրջանում խաղաղության և անվտանգության վերականգնման միակ տարբերակը և գործող մեխանիզմը:

ՀՀ ԳԱԱ-ն ձեր ուշադրությունն է հրավիրում արդեն առկա հումանիտար աղետին և կոչ անում հորդորել ձեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաներին ճանաչել Արցախի Հանրապետության անկախությունը, որպես միակ հնարավոր միջոց, Արցախի խաղաղ բնակչության դեմ իրականացվող ծանր հանցագործությունները կասեցնելու և թուրքերի կողմից իրականացված ցեղասպանությունից մեկ դար անց նոր ցեղասպանության իրականացումը բացառելու համար:

Ցանկանում ենք հատկապես շեշտել, որ մեր ուղերձի հիմքում ընկած են միայն հումանիստական մոլորներ»:

Ուղերձն ուղարկվել է Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Թուրք-

մենստանի, Մեծ Բրիտանիայի, Բրազիլիայի, Իրանի, Չինաստանի, Կանադայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Շվեյցարիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Լիտվայի, Արգենտինայի, Սլովենիայի, Լեհաստանի, Աթենքի, Կիպրոսի, Իսրայելի, Լիսաբոնի, Ուկրաինայի, Ավստրիայի, Էստոնիայի, Մեքսիկայի, Չեխիայի, Խորվաթիայի, Սերբիայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Դանիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի, Ճապոնիայի, Բելգիայի, Վրաստանի գիտությունների ակադեմիաներ, Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիա (IAAS), Եվրոպական երկրների ակադեմիաների ընկերակցություն (ALLEA), Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինք (ANSO), Թագավորական միություն, Ռեյնաուդիստական աստղաֆիզիկայի միջազգային կենտրոն ցանց (ICRANet), Գիտական հետազոտությունների և տեխնոլոգիայի ակադեմիա (ASRT):

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական վերլուծական ծառայություն

Մոլորակի գիտնականների կոչը համաշխարհային կառույցներին՝ փրկելու հայկական ժառանգությունը՝ ԲԱՆԻ ԴԵՌՈՒ ՌԻՇ ՉԷ

Նյու Յորք, 12 նոյեմբերի, 2020 (GLOBE NEWSWIRE) - Լեռնային Ղարաբաղի 2020 թ. պատերազմում ակտիվ մարտերի ավարտը միանգամայն հեռու է հիմնական զոհի՝ Արցախի (ինչպես հանրապետությունը կոչում են հայերը) հարուստ և անփոխարինելի մշակութային ժառանգության դեմ պատերազմի ավարտից:

Ընդամենը երկու տարի առաջ էր, որ աշխարհի մի շարք անվանի մշակութային հաստատություններ միջոցառումներ նվիրեցին հայկական արվեստին, պատմությանը և մշակույթին: «Մետրոպոլիտեն» արվեստի թանգարանում (Metropolitan Museum of Art) հայկական միջնադարյան արվեստին նվիրված միջազգային խոշոր ցուցահանդես էր Armenia!-ն: Ցուցադրված հրաշքները այցելությունների ռեկորդ սահմանեցին, արժանացան քննադատների ??գնահատանքին և ցույց տվեցին հայերի մեծ ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ: Վաշինգտոնի Ազգային ծառուղում (National Mall in Washington DC) կազմակերպվող

«Սմիթսոնյան ազգագրական փառատոնի» (Smithsonian Folklife Festival) ամենամյա ինտերակտիվ ցուցադրության ժամանակ ներկայացվեցին հայկական գեղարվեստական?? և մշակութային ավանդույթները՝ ռեկորդային թվով մարդկանց գրավելով: Նույն տարվա ընթացքում ֆրանսախոս ազգերի համաշխարհային կոնսորցիումը հավաքվեց Հայաստանի մայրաքաղաք Երևանում՝ Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովին (Summit of the Francophonie)՝ հյուրընկալելով աշխարհի հարյուրավոր ղեկավարների, այցելուների և միջազգային լրատվամիջոցների:

Հիմա՝ ընդամենը երկու կարճ տարի անց, աշխարհը աչք է փակում, մինչ ոչնչացվում են հայկական արվեստը, ճարտարապետությունը և պատմությունը: 2020 թ.-ի սեպտեմբերի 27-ին Ադրբեյջանը լայնամասշտաբ ռազմական հարձակում սկսեց Արցախի Հանրապետության վրա: Թուրքիան, որը շարունակում է ժխտել 1915-1922 թթ.-ին հայ ժողովրդի դեմ պատմական հայրենիքում իրականաց-

ված բնաջնջման իր ցեղասպանական ծրագիրը, ագրեսիայի այս վերջին գործողության ընթացքում իր լիակատար քաղաքական և ռազմական աջակցությունն էր ցույց տալիս Ադրբեյջանին:

Զնայած Ռուսաստանը արագ միջամտությամբ վերջ տվեց պատերազմին, սակայն ավելի քան մեկ ամիս շարունակ Արցախի Հանրապետությունը կրում էր քաղաքացիական և ռազմական ծանր կորուստներ: Կասետային ռումբերով և այլ հրետանային միջոցներով շարունակական գնդակոծությունները ավերակների են վերածել տները, հիվանդանոցները և դպրոցները: Ագրեսիայի հետևանքով թիրախավորվել են նաև մշակութային ժառանգության կոթողները՝ նպատակ ունենալով ջնջել տարածաշրջանում հայ ժողովրդի եզակի մշակութային ներդրումները և նրանց պատմությունը:

2020 թ.-ի հոկտեմբերի 8-ին ադրբեյջանական ուժերը երկու կանխամտածված հարձակում իրականացրեցին սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց տաճարի վրա՝ պատճառելով զգալի վնաս: ➤6



կան ինստիտուտում, ուր ղեկավարում էր ծրագրավորողների մի մեծ կոլեկտիվ: Նա նշանակալից աշխատանքներ է կատարում հաշվողական մեքենաների և համակարգերի ստեղծման բնագավառում: Դրանք վերաբերում էին ԷՄՆ-ների նախագծման ավտոմատացված համակարգերի հետազոտմանը և մշակմանը: Նրա ղեկավար մասնակցությամբ ստեղծվել է օպերացիոն համակարգ, որն ապահովել է արտադրատեսակների հուսալի աշխատանքը և այլ կիրառական ծրագրեր: Զոբեյրի երիտասարդ տարիների տեսական և կիրառական հետազոտությունների արդյունքներն ամփոփվեցին Կիևում պաշտպանված թեկնածուական (1968 թ.) և դոկտորական (1982 թ.) ատենախոսություններում:

1986 թ. ՀՀ գիտությունների ակադեմիայի ղեկավարության հրավերով Յուրի Շուբուրյանը ստանձնում է ԳԱԱ-ի ինֆորմատիկայի և ավտոմատացման

կազմի անդամ (ակադեմիկոս):

Մեծ է Շուբուրյանի ավանդը Հայաստանի տեղեկատվական համակարգչային գիտակրթական ցանցի ստեղծման, զարգացման և եվրոպական ակադեմիական կառուցվածքների հետ միացման գործում: Նրա ակտիվ մասնակցությամբ ստեղծվեցին ԱրմԿլաստերը, հայկական հաշվողական Գրիդ ինֆրակառուցվածքը, և սկսվեցին աշխատանքները Հայաստանի ազգային սուպերկոմպյուտերային կենտրոնի ստեղծման ուղղությամբ: Կենտրոնը կնպաստի հաշվողական գիտությունների զարգացմանը և դրա օգտագործմանը Հայաստանի սոցիալական խնդիրների և տնտեսության պահանջների համար:

Յուրի Շուբուրյանի ջանքերի շնորհիվ պահպանվեցին և նոր զարգացում ստացան ՀՀ ԳԱԱ միջազգային կապերը ինֆորմատիկայի և հարակից գիտությունների գծով: Նրա նախաձեռնությամբ

րել ատենախոսությունների պաշտպանության եղանակով՝ մասնագիտական գիտական խորհրդի միջոցով, որի նախագահի պաշտոնը վերապահվել է իրեն: Ավելի քան չորս տասնամյակ անընդմեջ դասախոսական-մանկավարժական աշխատանք է կատարում Երևանի պետական համալսարանում:

Հայաստանի Հանրապետությունը բարձր է գնահատել Յուրի Շուբուրյանի երկարամյա գիտական և գիտակազմակերպական գործունեությունը՝ շնորհելով նրան սուրբ Մեսրոպ Մաշտոցի և Պատվոց նշան շքանշաններ և արժանացնելով գիտության վաստակավոր գործչի կոչման:

Յուրի Շուբուրյանը հմտորեն համատեղում է իր և իր գործընկերների նկատմամբ խստապահանջությունը՝ նրբանկատ ու հետևողական ուշադրության հետ: Այդ հատկանիշների և պարզ, անմիջական ու բարեկիրթ վերաբերմունքի շնորհիվ գիտական կոլեկտիվն իր ղեկավարությամբ աշխատում է համախմբված ու արգասավոր, որի արդյունքն է լինում գիտական նոր ձեռքբերումները: Աշխատանքային ոճի օրինակելի այդ հատկանիշներով Յուրի Շուբուրյանը 35 տարի գլխավորում է ինստիտուտի գործունեությունը, նախ որպես տնօրեն (20 տարի), ապա գիտական ղեկավար: Քսանհինգ տարի վարում է ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պատասխանատու պաշտոնը:

Բնատուր մտավորականի արժանապատիվ կեցվածքով պրոֆեսոր Յուրի Շուբուրյանը բարերար ազդեցություն է թողնում շրջապատի վրա, ակադեմիական և մասնագիտական ոլորտում: Նա բնականից հատուկ հակվածություն ու սեր ունի կերպարվեստի, առհասարակ արվեստի նկատմամբ, մշտապես հարաբերվել է մշակույթի այդ ճյուղի հետ, ծանաչվել արվեստագետների շրջանում:

Իր 80-ամյակի օրը հոբելյարին ի սրտե մաղթում ենք քաջառողջություն, արևաշատություն, երկար և արգասավոր գործունեություն՝ ի փառս հայրենական գիտության:

Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս

Լ. Ա. ԱՂԱՆԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկական և

տեխնիկական գիտությունների

բաժանմունքի ակադեմիկոս-

բարտուղար, ակադեմիկոս

Հ. Վ. ԱՍՅԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ տնօրեն

Յուրի ՇՈՒԲՈՒՐՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ ականավոր գիտնական և գիտության կազմակերպիչ, կոմպյուտերային գիտության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների անվանի մասնագետ, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Յուրի Հայկի Շուբուրյանի ծննդյան 80-ամյակը:
Յուրի Շուբուրյանը ծնվել է 1940 թ. նոյեմբերի 5-ին Երևանում: Ոսկե մեդալով ավարտելով դպրոցը, նա բարձրագույն կրթություն է ստացել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ մասնագիտանալով հաշվողական տեխնիկայի բնագավառում: Ասպիրանտական ուսուցումն անց է կացրել Կիևում՝ ակադեմիկոս Վ. Մ. Գլուշկովի ավտոմատների հանրահաշվական տեսության նշանավոր դպրոցում, որտեղ ձեռք է բերել տեսական հիմնավոր ու խոր գիտելիքներ և գործնականում կիրառելի հմտություններ: Գիտության տեսական և գործնական ուղղությունների համատեղումը դարձավ նրա հետագա գիտական գործունեության անխախտ սկզբունքը:

1971 թ. Յուրի Շուբուրյանն աշխատանքի է անցնում Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտա-

պրոբլեմների ինստիտուտի (այն ժամանակ՝ հաշվողական կենտրոն) տնօրենի պաշտոնը: Ինստիտուտի ղեկավարումը երիտասարդ մասնագետին վերապահվեց 1990-ական թվականների տնտեսական ճգնաժամի ծանր տարիներին, երբ պայքար էր գնում գիտության առկա վիճակը, թեկուզ կորուստներով, միայն պահպանելու մասին: Յու. Շուբուրյանի անուրանալի գիտական և գիտակազմակերպական գործունեության շնորհիվ հաջողվեց այդ տարիներին ոչ միայն հիմնականում պահպանել ինստիտուտի գիտական ներուժը, այլ նաև ուրվագծել ինստիտուտի հեռանկարային զարգացման նոր տեսանկյուններ:

Յու. Շուբուրյանի կողմից ստացվեցին նոր տեսական արդյունքներ տարաբաշխված մաթեմատիկական մոդելների և զուգահեռ հաշվարկների վերաբերյալ: Նրա գործուն մասնակցությամբ ստեղծվեց ակադեմիայի համակարգչային ցանցը, մշակվեցին ու կատարելագործվեցին ՀՀ ԳԱԱ 30-ից ավելի ինստիտուտներ ընդգրկող ցանցի ծրագրային ապահովման համակարգերը: Յու. Շուբուրյանի գիտական և գիտակազմակերպական ակտիվ գործունեությունն արժևորվեց 1990 թ.՝ նրան ընտրելով ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996 թ.՝ իս-

կ ղեկավարությամբ երկու տարին մեկ պարբերաբար կազմակերպվում են Կոմպյուտերային գիտության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների միջազգային գիտաժողովներ: Այս տարի անցկացվեց 10-րդ միջազգային գիտաժողովը, որին տեղի գիտնականներից բացի մասնակցեցին ավելի քան 50 արտասահմանյան ճանաչված գիտնականներ: Լայն ճանաչման են արժանացել նրա աշխատանքներն ավտոմատների մաթեմատիկական տեսության և կիրառությունների բնագավառում:

Յուրի Շուբուրյանին հատուկ է կոմպյուտերային տեխնոլոգիաների արդի ուղղությունների զարգացման նոր միտումների զգացումը: Այդ ունակությունը և գիտական հիմնահարցերի ընդգրկման լայն մտահորդգոնը հնարավորություն են ընձեռում նրան Հայաստանում հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի բնագավառի հետազոտությունների զարգացումը պահպանել միջազգային չափանիշներին համահունչ:

Ծանրակշիռ է նրա վաստակը երիտասարդ մասնագետների պատրաստման գործում: Իր ամձնական ղեկավարությամբ գիտական աստիճան են ստացել 20-ից ավելի երիտասարդներ: Տասնամյակներ շարունակ կադրեր է աճեց-

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը պահանջում է ՀՀ կառավարության հրաժարականը



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունն Արցախի և Հայաստանի դեմ թուրք-ադրբեջանական ագրեսիայի արդյունքում ստեղծված իրավիճակի վերաբերյալ հանդես է եկել հայտարարությամբ: Հայտարարությունն ընդունվեց ՀՀ ԳԱԱ նախագահության նոյեմբերի 24-ի նիստում:

Հայտարարության մեջ նշված է.

«2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի և Թուրքիայի սանձազերծած պատերազմի արդյունքում Հայաստանի Հանրապետու-

յունում և Արցախում ստեղծված ծանրագույն իրավիճակի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը հայտարարում է.

1. Նոյեմբերի 9-ին Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքված հայտարարությունը գնահատում ենք որպես հայ ժողովրդի համար նվաստացուցիչ փաստաթուղթ, ըստ որի Արցախի Հանրապետությունը կրում է խոշոր տարածքային կորուստներ, ունենում է ինքնիշխանության լրջագույն սահմանափակումներ, հայկական զույգ պետություններում և Սփյուռքում ստեղծվում է բարոյափոգեթանական բարդ ու ծանր մթնոլորտ:

2. Ստեղծված իրավիճակում Ռուսաստանի Դաշնության խաղաղապահներին համարում ենք Արցախի հայության նկատմամբ թուրք-ադրբեջանական ցեղասպան և հայրենագրկման քաղաքականությունից փրկության և տարածաշրջանում կայունության հաստատման բացառիկ երաշխավոր:

3. Բարձր ենք գնահատում հայկական զինուժի վճռա-

կան դերն Արցախի իշխանությունների վերահսկողության տակ գտնվող տարածքի պահպանման գործում: Կոչ ենք անում ամեն կերպ բացառել բանակի բարոյալքումը, նպաստել բանակի համալրմանը, ամրապնդմանը և արդիականացմանը:

4. Խստագույնս դատապարտում ենք տարիներ շարունակ գիտության նկատմամբ հանրապետության իշխանությունների կրավորական վերաբերմունքը, որի արդյունքում անհնարին դարձավ երկրի պաշտպանական համակարգում ժամանակակից գիտատեխնիկական նվաճումների կիրառումը:

5. Անթույլատրելի ենք համարում հասարակության մեջ թշնամության, վրեժխնդրության, անվստահության, ատելության սերմանումը և կոչ ենք անում վճռական ջանքեր գործադրել համերաշխության և միասնության մթնոլորտ ստեղծելու համար:

6. Ստեղծված իրավիճակում անարդյունավետ ենք համարում ՀՀ կառավարության հետագա պաշտոնավարումը և պահանջում կառավարության հրաժարականը հանրապետության վարչապետի գլխավորությամբ»:

ՀԱՅԵՐԸ ՊԵՏՈՒԹԵՆԱՍՏԵՂԾ ԱԶԳ

Նախանցյալ շաբաթ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտնած միտքը, թե հայ ժողովրդի համար պետականության գաղափարը խորթ է, և հայերս ազգովին չենք սիրում այն, մեղմ ասած՝ զարմացրել էր մեր շատ պատմաբանների: Մեր թերթում առաջինը դրան արձագանքեց պրոֆ. Ս. Սարգսյանը «Մենք պետականության գաղափարը հավերժ կրող ազգ ենք» հոդվածով: Այսօր նույն խնդրին անդրադառնում է պատմաբան-արևելագետ, ակադեմիկոս Ն. Հովհաննիսյանը ընդարձակ հոդվածով, ներկայացնելով Վանի թագավորությանը հաջորդած հայկական և 5 թագավորական հարստությունների (դինաստիա) պետականաստեղծ ու պետականաշեն գործունեության շատ հակիրճ պատմությունը, չմոռանալով նշել նաև, անշուշտ, բազմաթիվ այլ պետություններում հայկական պետականաստեղծման դրվագներ:

Խմբ.

Աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը՝ հայ ժողովուրդը, ունի իրեն բնորոշ մի շարք բարձրարժեք որակներ և յուրահատկություններ: Մենք համաշխարհային պատմության խորքային ուսումնասիրության հիման վրա համզել ենք այն եզրակացության, որ հայերը պետութենաստեղծ ազգ են: Դարերի ընթացքում միանգամ չէ, որ հայությունը հիմնել է իր պետականությունը, կորցրել, նորից վերականգնել և նորից կորցրել: Բայց անկախ պետականություն ունենալու հայերի ձգտումը մնացել է անկոտրուկ: Այդպես է եղել հնագույն շրջանում, այդպես է եղել միջին դարերում, այդպես է եղել նոր և նորագույն շրջանում, այդպես է մեր օրերում: Դա դրսևորվել է երկու կերպ:



Վանի թագավորության գլխավոր զինանշանը՝ առյուծը

Առաջին, ազգային պետականության հաստատում իր բնօրրանում՝ բուն Հայաստանում:

Երկրորդ, օտար երկրների և ժողովուրդների պետականության ստեղծում, պահպանում և օժանդակում: Դա համաշխարհային պատմության մեջ բացառիկ երևույթներից մեկն է:

Առաջին կամ բուն Հայաստանի առումով, պետութենաստեղծումն իրականացվել է մեկը մյուսին հաջորդաբար Վանի (մ.թ.ա. 858-մ.թ.ա.585), Երվանդունիների (մ.թ.ա. 570-մ.թ.ա.195), Արտաշեսյանների (մ.թ.ա.189-մ.թ.ա.1), Արշակունիների (54-428 թթ.) և Բագրատունիների (885-1045թթ) հայկական թագավորական դինաստիաներով, Կիլիկյան Հայաստանով (1080-1375թթ.): Պետության գաղափարը ամուր նստած է հայության գեներում, և նա ուր գնում է, որ երկրում հաստատվում է, պետության գաղափարն իր հետ է տանում: Հաստատվելով օտար երկրներում, հայկական հավաքականությունը որպես կանոն ակտիվ դերակատարում է ունեցել և շարունակում է ունենալ օտար ժողովուրդների պետական կառավարման համակարգում, այդ պետությունների ամրապնդման ու կայացման գործում, որը հաստատվում է բազմաթիվ օրինակներով:

428 թ., Արշակունիների ամկումից հետո, թեև Հայաստանը կորցրեց ինքնուրույն գործոն լինելու իր կարգավիճակը, սակայն անգամ այդ պայմաններում, V-VII դարերում, մարզպանության շրջանում, Հայաստանը հիւ-հնազանդ ենթակա չէր, այլ կարողանում էր յուրահատուկ ձևով դրսևորել իր կամքը և պահպանել իր ազգային կերպարը, որի հետ հարկադրված էր հաշվի մատել Սասանյան Պարսկաստանը: Ընդ որում, հայ մախարարները պահպանում էին իրենց ժառանգական ի-

րավունքները, տիրույթները, համապատասխան տեղը կառավարման համակարգում: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հայկական ռազմական ուժերը չլուծարվեցին կամ չտարրալուծվեցին պարսկական ռազմական ուժերի մեջ: Նրանք պահպանեցին նաև այլ արտոնություններ: Այս բոլորը հիմք է ծառայել այն տեսակետի համար, որ Արշակունիների անկումից հետո էլ յուրահատուկ կերպով պահպանվել է թագավորական, այսինքն պետական իշխանությունը, որն անցել էր հայ մախարարներին:

Այդ շրջանում, 640-ական թվականներին, քաղաքական քարտեզի վրա հայտնվում է մի նոր պետություն՝ Արաբական խալիֆայությունը, որը պարտության է մատնում Սասանյան Պարսկաստանին, նվաճում այն և այլ տարածքներ: Տեղի են ունենում նաև բախումներ խալիֆայության և Հայաստանի միջև: Հայաստանի իշխան թեոդորոս Ռշտունին, որը շատ հեռատես, ճկուն և խելացի պետական այր էր, մտահոգ Հայաստանի ապագայով և անվտանգության խնդիրներով, որդեգրում է նոր ռազմավարություն, որի արդյունքում 652 թ. ստորագրվում է հայ-արաբական պայմանագիր, որը հայ պատմիչ Սեբեոսը բնութագրում է որպես «Հաշտության պայմանագիր»: Թեոդորոս Ռշտունին Արաբական խալիֆայի կողմից վերստին հաստատվեց ոչ միայն Հայոց իշխանի իր պաշտոնում, այլև նշանակվեց նաև փոքրիկ Աղվանքի իշխան: Այսպիսով, Թեոդորոս Ռշտունու իշխանության ներքո հայտնվեցին Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը և ողջ Կովկասը մինչև ճորա պահակ: Հետագայում իրադրությունը փոխվում է, և արաբները ներխուժում են Երուսաղեմ, Հայաստան, Քարթլի և կովկասյան այլ շրջաններ: Երուսաղեմի Հայ եկեղեցու առաջնորդը, կանխատեսելով արաբների մոտակա ներխուժումը Երուսաղեմ, ճանապարհորդում է Սեբքա, համդիպում իսլամի հիմնադիր Մուհամմադ մարգարեին և նրանից ստանում իրավարտակ, որը երաշխավորում էր Երուսաղեմում բնակվող հայերի կյանքի և գույքի ապահովությունը: Միաժամանակ մարգարեն ճանաչում է Հայ ե-



Բագրատունյաց հարստության զինանշանը



Արտաշեսյանների թագավորության խորհրդանշանը՝ Արծիվը, մագիլների տակ՝ թշնամիները

կեղեցու իրավունքները Երուսաղեմի բոլոր այն սրբատեղերի վրա, որոնք գտնվում էին նրա վերահսկողության տակ: Երբ խալիֆա Օմարը 638 թ. գրավում է Երուսաղեմը, իր նոր հրովարտակով հաստատում է բոլոր այն երաշխիքները, որ Մուհամմադ մարգարեն տվել էր Երուսաղեմի Հայոց պատրիարքությանը: Հետագայում Սալահ ադ-Դինը նույնպես ճանաչում է Երուսաղեմի Հայ եկեղեցու բոլոր այն իրավունքները, որը նրան տվել էին իր նախորդները:

VII դարի կեսերին վերսկսվում են արաբական նվաճումները, որոնք ծավալվում են երեք ուղղություններով՝ արևմտյան, արևելյան և հյուսիսային: Արաբական խալիֆայությունը ձգտելով ծավալվել դեպի հյուսիս, նպատակ ուներ նվաճել Կովկասը: 701 թ. տեղի ունեցավ Հայաստանի նվաճումը: Նույն այդ թվականին Արաբական խալիֆայությունը նվաճեց նաև Վրաստանը, Աղվանքը և մերձկասպյան տարածքները: Հարավային Կովկասն ամբողջությամբ անցավ խալիֆայության տիրապետության տակ: Եվ դրանք հետո տեղի ունեցավ մի կարևոր իրադարձություն: Արաբական խալիֆայությունը վերոնշյալ նվաճված տարածքներից 701 թ. ստեղծեց նոր վարչական տարածք կամ միավոր, որը կոչվեց Արմինիա՝ Հայաստան: Նրա մեջ մտնում էին Հայաստանը, Վրաստանը (Ջուրգան), Աղվանքը (Առանք), մերձկասպյան շրջանները, որոնց հիման վրա հետագայում ձևավորվեց Շիրվանը և Դերբենդը (Բաբ ալ-Աբվաբ): Արմինիա վարչատարածքային միավորի կառավարիչը կոչվում էր ոստիկան, որի նստավայրը Հայոց հին մայրաքաղաք Դվինն էր: Սա նույնպես բացառիկ իրողություն է: Արմինիան ըստ էության մի պետություն էր պետության մեջ, տվյալ պարագայում՝ Արաբական խալիֆայության մեջ: Դա ուղղակի շշմեցուցիչ փաստ է:

Հետագա տարիներին սրվում են հարաբերությունները Արաբական խալիֆայության և Հայաստանի միջև, որի արդյունքում, ի վերջո, 885 թ. Հայաստանին հաջողվեց նվաճել իր անկախությունը: Արաբական խալիֆա Մութամիդը ստիպված հաշտվում է կատարված իրողության հետ՝ Աշոտ Բագրատունու ճանաչել Հայաստանի թագավոր, նրան թագ ուղարկել, ինչպես նաև արքային վայել նվերներ՝ թագավորական զգեստներ, պարզներ, ընծաներ, հրեղեն երկվարներ, զենքեր ու զարդեր: Նա օժկում է «Հայոց թագավոր Աշոտ I» անվամբ, իսկ Բագրատունիները հաստատվում են որպես կառավարող թագավորական դինաստիա:

Այսպիսով, Արշակունիների անկումից 457 տարի և արաբական նվաճումից մոտ 200 տարի անց, Հայաստանը վերականգնեց իր անկախ պետականությունը: Նա դարձավ իրենից որոշակի ուժ ներկայացնող երկիր, ներագրում էր աշխարհաքաղաքական մթնոլորտի ձևավորման և քաղաքական ուժերի հավասարակշռության հաստատման գործընթացի վրա: Ասվածն ավելի է հաստատվում, եթե նկատի ունենանք, որ արաբական խալիֆան և բյու-

զանդական կայսրը մշտապես մրցակցում էին Հայաստանն իրենց կողմը գրավելու և դրանով տարածաշրջանում իրենց դիրքերն ամրապնդելու և ազդեցությունն ուժեղացնելու համար: Այդ պարագան բարձրացնում էր Հայաստանի կարևորությունը հաշս կայսեր և խալիֆայի:

Բյուզանդիային հաջողվեց տապալել Բագրատունիների դինաստիան և իրեն ենթարկել Հայաստանը: Ահա, այսպես, Հայաստանը կրկին կորցրեց իր անկախությունը և մոտ հինգ դար հայտնվեց օտար նվաճողների իշխանության ներքո, որոնք մորեխի նման հայտնվում էին տարածաշրջանում:

Սակայն պետք է նշել, որ տարբեր երկրներում, մասնավորապես արաբական երկրներում, Բյուզանդիայում, Կիլիկիայում, Ռուսաստանում կենտրոնացված էին ազդեցիկ հայկական համայնքներ, որոնք կարևոր քաղաքական, ռազմական, տնտեսական և մշակութային դիրքեր ունեին և ներգրավված էին հյուրընկալ երկրների հասարակական և քաղաքական, անգամ կառավարման համակարգում: Ահա հենց այս հայկական համայնքներն էին, որ ամենաակտիվ կերպով ներգրավվել էին հյուրընկալ երկրների և ժողովուրդների պետականաստեղծ գործունեության մեջ, նրանց կայացմանը և զարգացմանը: Կանգ առնենք դրանցից մի քանիսի լուսաբանման վրա:

1. Բյուզանդական կայսրություն: Հայկական դինաստիա: Հայտնի է, որ Հռոմեական կայսրությունը 395 թ. բաժանվեց երկու մասի՝ արևմտյան, որը շարունակվեց կոչվել Հռոմեական կայսրություն, և արևելյան, որը կոչվեց Բյուզանդական կայսրություն: Դրանք առանձին, միմյանցից անկախ կայսրություններ էին: Բյուզանդական կայսրությունում մեծաքանակ էին հայերը, այդ թվում պաշտոնյաները, զինվորական գործիչները, հոգևորական այրերը, որոնք մեծ ազդեցություն և դիրք ունեին: Նրանք այնքան ուժեղ էին, որ 867 թ. գրավեցին իշխանությունը, Բյուզանդիայի կայսրությունում հաստատվեց Հայկական դինաստիան: Հայկական դինաստիայի հիմնադիրը հայազգի Բարսեղ Առաջինն էր: Հայ կայսրերը Բյուզանդիան կառավարել են համարյա երկու դար, մոտ 190 տարի՝ 867-1057 թթ:

2. Ռուսիայի ուղղափառության ընդունումը և հայազգի Ամնա իշխանուհու դերը: Սկզբնական շրջանում Բյուզանդական կայսրությունը կառավարում էին համակայսր երկու հայ եղբայրները՝ Բարսեղ Երկրորդ Բուլղարասպանը և Կոնստանտինը: Հայերի ղեկավար դերակատարումը չի սահմանափակվել միայն Բյուզանդիայով: Հայկական դինաստիան բախտորոշ դերակատարում է ունեցել նաև Ռուսիայի ճակատագրում՝ կապված 988 թ. Ռուսիայի քրիստոնեությունը ընդունելու հետ: Նրանց քրոջ՝ Ամնայի հետ ամուսնանալու ցանկություն է հայտնում Ռուսիայի իշխան Վլադիմիր Սվյատոսլավովիչը: Ամուսնանալու համար Ամնան պայման է դնում, որ Վլադիմիրը պետք է ընդունի քրիստոնեություն: Վերջինս համաձայնվում է և «Վերադառնալով մայրաքաղաք (Կիև-Ն.Յ.) Վլադիմիրը հրամայում է ոչնչացնել կուռքերը, իսկ ժողովուրդը մկրտվեց Դնեպրում»: Ռուսիան ընդունում է ուղղափառ քրիստոնեություն: Ուղղափառությունը՝ պրավոսլավիեն, ինչպես հայտնի է, ռուսական պետության հիմքերի հիմքն է: Մյուս կողմից, եթե մի պահ ենթադրենք, որ Ռուսիան ընդուներ իսլամ, ապա ո՞վքար է պատկերացնել, թե ինչպես կընթանար համաշխարհային պատմությունը: Հայոց իշխանուհի Ամնան, որը դարձավ Ռուսիայի իշխանի առաջին տիկին, բախտորոշ և դրական դերակատարում ունեցավ ոչ միայն Ռուսիայի, այլև համաշխարհային մասշտաբով:

**Պրոֆ. Նիկոլայ ՅՈՒՐԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱՄ թղթակից անդամ**

(շարունակելի)

(Սկիզբը՝ նախորդ համարում)

1914թ. նոյեմբերի 28-ի մարտում՝ Կոբիյե գյուղի մոտ հրետանային արևի պայթյունից ստանում է կոնտուզիա և կոտորակառնվածքի՝ աջ ականցի վիրավորում: 1914թ. դեկտեմբերի 15-ին պարզակատրվում է սբ. Աննայի IV աստիճանի շքանշանով՝ «Արիության համար» մակագրությանը, իսկ 1915թ. փետրվարի 4-ին թշնամու դեմ մարտերում աչքի ընկնելու համար պարգևատրվում սբ. Ստանիսլավի III աստիճանի՝ սրերով և վարդակապով շքանշանով:

1915թ. փետրվարի 16-ին, մարտում՝ 816 բարձունքի վրա, Ստեյնիցա գյուղի մոտ հրազենային գնդակով ստանում է միջնկանային վիրավորում ծախս ոտքի ազդրի միջին շրջանում:

Թշնամու դեմ մարտնչելիս աչքի ընկնելու համար «անվախ ու վեհանձն ասպետը» 1915թ. ապրիլի 18-ին պարգևատրվում է Գեորգիայան զենքով՝ 1914թ. նոյեմբերի

յիսից կռվում է թուրքերի դեմ, կռվկասյան ռազմաճակատում: Կռվում է՝ «ծոցագրպանում մի նամակ պահած, նամակ, որից նա իմացել էր իր թանկագին ուսուցչի և իր ժողովրդի ահավոր ողբերգության մասին»:

Այսպես՝ 1915թ. հունիսի 2-ին Վ.Տեր-Առաքելյանը գործուղվում է Կովկասյան բանակի շտաբի հրամանատարության տակ: Հունիսի 22-ին ներկայանում է Բաքվի 153-րդ հետևակային գունդ՝ համալրման: Գրանցվում է գնդի և I վաշտի ցուցակներում: Հունիսի 28-ին նրան շնորհվում է պողպատե զինանշան: Օգոստոսի 4-ին հիվանդանում է և էվակուացվում: 1915թ. դեկտեմբերի 7-ին առողջանալուն պես, ներկայանում է գունդ: 1916թ. հունվարի 31-ին նշանակվում է կապավորական խմբի հրամանատար, իսկ մարտի 28-ին՝ Կովկասյան բանակի թիվ 158 հրամանով, թուրքերի դեմ մարտերում աչքի ընկնելու համար պարգևատրվում սբ. Աննայի II աստիճանի սրերով շքանշանով:

ԵՐԳԻՉ ԳՆԴԱՊԵՏԸ. ՎԱՀԱՆ ՏԵՐ-ԱՌԱՔԵԼՅԱՆ

«Փորձանքներ շատ են տեսել, հազար-հազար անգամ գրկախառնվել են մահվան հետ ու դեն հրել նրան ապրելու վճռականությամբ»:

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ԱՌԱՔԵԼՅԱՆ



րի 28-ին Կրասնովո գյուղի մոտ, տեղանքի արտակարգ բարդ պայմաններում թշնամու դիրքերը գրոհելիս, վաշտի գլուխն անցած, սկիներով թշնամուն խրամատներից դուրս շարտելու համար: Վիրավոր վիճակում մնալով շարքում՝ գերի է վերցնում 1 սպա և 249 ցածրաստիճան զինվորականներ: 1915թ. ապրիլի 19-ին Վ.Տեր-Առաքելյանը պարգևատրվում է սբ. Գեորգիի IV աստիճանի շքանշանով՝ 1915թ. հունվարի 24-ի լույս 25-ի գիշերային մարտի ժամանակ՝ Ստեյնիցա գյուղի մոտ 682 ամրացված բարձունքը գրոհելիս, վաշտի գլուխն անցած, թևից թշնամուն շրջանցելու և սրընթաց սկիներամարտով նրա խրամատներին տիրամալու, երկու գործող զնդացիր առգրավելու, 3 սպա և 200 ցածրաստիճան զինվորական գերի վերցնելու համար:

1915թ. մայիսի 15-ին Վ.Տեր-Առաքելյանը պարգևատրվում է սբ. Աննայի III աստիճանի՝ սրերով և վարդակապով շքանշանով:

1915թ. հունիսի 1-ին վերքերը բուժելուց հետո վերադառնում է գունդ: «Քաջ ու անվեհեր սպային առաջարկում են ծառայության անցնել կայսերական հատուկ գործադրում, սակայն նա շնորհակալություն հայտնելով՝ հրաժարվում է և, առաջնորդվելով հայրենասիրական բուռն, անդիմադրելի ցանկությամբ, խնդրում է հրամանատարությանը իրեն փոխադրել թուրքական ռազմաճակատ. «Նրանք մեր ժողովրդի թշնամիներն են, ես կուզեմայի չափվել հատկապես դրանց հետ», - ասում է Վահանը: Նրա խնդրանքը չի մերժվում, և նույն թվականի մա-

1916թ. մայիսի 4-ին թուրքերի դեմ մարտերում աչքի ընկնելու համար պարգևատրվում է սբ. Ստանիսլավի II աստիճանի սրերով շքանշանով: Հունիսի 13-ին նշանակվում է I վաշտի հրամանատար, իսկ հունիսի 16-ին հանձնում կապավորների խումբը: 1916թ. օգոստոսի 19-ին նրան շնորհվում է պողպատե զինանշան, դեկտեմբերի 20-ին շտաբ-կապիտանի կոչում:

1917թ. օգոստոսի 16-ից մինչև հոկտեմբերի 10-ը II գումարտակի ժամանակավոր հրամանատարն էր: 1917-ի դեկտեմբերի 2-ին Վ.Տեր-Առաքելյանը գործուղվում է հայկական 2-րդ հրաձգային բրիգադի շտաբ, Հայ ազատագրական բանակի կազմում մասնակցում Սարդարապատի ճակատամարտին: Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո ստանձնում է Կարսի ռազմաճակատի շտաբի պետի պաշտոնը: Տարիներ անց զնդապետ Ա.Մելիք-Փարսադանյանը կհիշի. «Խորին հարգանքի ու հիացմունքի զգացումով են հիշում Վահան Տեր-Առաքելյանին, ում մեջ համեստությունը զուգորդված էր վճռականությամբ, հոգու մեղմությունը՝ իրական քաջությամբ: Շրջապատի նկատմամբ դրսևորած անբասիր ազնվությանը ու պարզությամբ, դատողությունների անկեղծությանը և սկզբունքայնությամբ նա ձեռք էր բերել համընդհանուր հարգանքը և մտերիմների ու ընկերների սերը: Նրա մասին առաջին անգամ տեղեկացա 1914-18 թթ. Համաշխարհային պատերազմի ժամանակ, կարդալով նրա անունը ռուսական բանակի ռազմական գործողությունների մասին «Գերագույն գլխավոր հրամանատարի շտա-

բի հաղորդագրություններից» մեկում: Այնտեղ տպված էր, որ պողպատե Տեր-Առաքելյանը արևմտյան ճակատում գրոհով գրավել է ստրատեգիական կարևորություն ունեցող բարձունքը և դրանով ապահովել ամբողջ օպերացիայի հաջողությունը:

Ես չեմ հիշում մեկ ուրիշ դեպք, որ այդ պատերազմի ժամանակ ռազմական տեղեկատվություններում հիշատակվեր որևէ մեկի անունը՝ առավել ևս մինչև այդ անհայտ հայ զինվորական սպայի:

Թուրքիայի կողմից Ղարսը գրավելուց 3 օր առաջ ծառայողական գործերով եղա բանակի շտաբում, որը տեղավորված էր բերդային ամրություններից մեկի մոտակայքում գտնվող շենքում: Այնտեղ ես ծանոթացա բերդի շտաբի պետ զնդապետ Տեր-Առաքելյանի հետ: Նկատելով նրա կրծքին Գեորգիի սպիտակ շքանշանը, ես իսկույն կռահեցի, որ իմ առջև հերոս սպա է, ում ազգանունը կարդացել էի ռազմական գործողությունների հաղորդագրության մեջ և մտապահել:

Այսպիսով՝ մարտնչելով Արևմտյան (1914-1915) և Կովկասյան (1915-1917) ռազմաճակատներում՝ հասնելով զնդապետի աստիճանի, մարտական գործողություններում ցուցաբերած արիության համար, որպես խիզախ ու հմուտ հրամանատար, Վ.Տեր-Առաքելյանը պարգևատրվել է սբ. Աննայի IV, III, II աստիճանի և սբ. Ստանիսլավի III, II աստիճանի շքանշաններով, մարտական սրերով և պատվոգրերով:

1921-ից Վ.Տեր-Առաքելյանը բնակվել է Թիֆլիսում: Թիֆլիսում, Երևանում և Լենինականում կայացած համերգներին կատարել է Կոմիտասի, Ռ.Մելիքյանի և Սայաթ-Նովայի երգերը:

Վ.Տեր-Առաքելյանը զբաղվել է գրական և թարգմանական գործունեությամբ: Նրա գրական ժառանգությունը ներառում է նրա ռազմական հուշագրությունը՝ հայերեն օրագրությունն ու ռուսերեն հիշողությունները, Կոմիտասի, Հովհ.Թումանյանի և Ավ.Խսահակյանի մասին հուշերը, հոդվածները ժամանակի թատերական և երաժշտական կյանքի վերաբերյալ ու մամականին: Գրական ժառանգության գոյություն ունի նաև արձակ էջերը («Մի գիշեր Սևանում», «Ինչ չգիտեին աստվածները», «Կնոջ ծագումը», ասույթները) և բանաստեղծությունները («Մայրենի լեզու», «Հովհաննես Հովհաննիսյանին», «Ժողովրդական մոտիվներ» ևն): Արժեքավոր է նաև Վ.Տեր-Առաքելյանի թարգմանական ժառանգությունը. նա թարգմանել է Լ.Տոլստոյի «Աննա Կարենինան», Յա.Հաշեկի «Քաջ զինվոր Շվեյկի արկածները համաշխարհային պատերազմի ժամանակ» ևն, Ա.Ս.Պուշկինի («Մարգարե», «Կյանքի սայլը», «Անջար», «Սիբիր, դեկաբրիստներին», «Я Вас люблю» ևն, բոլորը՝ 1936թ. մարտ-ապրիլ) և Մ. Գորկու բանաստեղծությունները:

Ցավոք, երգչի բազմաթիվ կատարումներից պահպանվել են մի քանիսը, որոնցից իմը գտնվում են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվան ծայրափայտում. 1927թ. սեպտեմբերին գիտարշավի ընթացքում Քրիստափոր Քուշնարյանը ծայրագրել է Վահան Տեր-Առաքելյանի կատարմամբ Սայաթ-Նովայի «Ինչ կոմիս հեքիմն» և «Մե խոսկ ունիմ» երգերը, երկու հատված աշուղական սիրավեպերից, «Արազ կուգաս Բիմգյուլեն» բնարական երգը, «Ելա երթիս» պարերգը, «Բուրու գյալիտ» թուրքերեն երգը, ինչպես նաև մեկ քրդական սիրերգի կատարումը սուլեյով:

Հանդիպումներից մեկի ժամանակ Ավետիք Իսահակյանը հարցրել է Վահան Տեր-Առաքելյանին, թե ինքն ի վերջո որ ճյուղն է նախընտրելու, գրականությունը, թե երաժշտությունը: «Օպերան, - պատասխանել է Տեր-Առաքելյանը: Դա նրա երազն էր, որը սակայն այդպես էլ չիրականացավ»: Չիրականացավ, բանգի նրա ճակատագիրն այդպես տնօրինեց Առաջին համաշխարհային պատերազմը, որի պատճառով հայ բեմը կորցրեց իր մեծ տենորին:

Եվ այսօր, առավել քան երբևէ, նաև մենք, արվեստագետներս, ոչ միայն պետք է պայքարենք հանուն մեր Հայրենիքի, այլև մեր ծայրը բարձրացնենք ընդդեմ պատերազմների, հանուն խաղաղության:

ԱՆՆԱ ԱՍՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԼԻԲԱՆԱՆԱԸԱՅ ԹԱՏԵՐԱԳՐԻ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ



Անթիլիասում լույս է տեսել Գեորգ Մելիտինեցի գրական մրցանակաբաշխության 100-րդ հատորը՝ լիբանանահայ թատերագիր, արձակագիր և բեմադրիչ Վաչե Ատրունու «Ծերունին եւ լեռը» ընդհանուր խորագրով թատերախաղերի ժողովածուն: Այն ընդգրկում է հեղինակի վեց թատերգությունները՝ «Ծերունին եւ լեռը», «Գարնան երեք օրերը», «Խնձորի բոյրը», «Մարդը Աթլանթիսում», «Երջանիկ օր

գետափին» և «Պիպեր Ղազարը»:

Մինչ այս լույս են տեսել Ատրունու «Ծառը» (2006), «Անալարտ սկիզբ, Հմամաշ պայուսակը, Գամիշ» (2007) և «Մեր թաղի մարդիկ» (2017) հատորները:

Վաչե Ատրունին ծնվել է Բեյրութում, 1949-ին: 1976-ին ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը բեմադրիչի մասնագիտությամբ: Դասավանդել է Բեյրութի Հայ-

կազյան համալսարանում, Հյուսիսյան հայագիտական հիմնարկում և տարբեր դպրոցներում: Կնոջ՝ դերասանուհի և բեմադրիչ Լանա Քոչարյան-Ատրունիի հետ Բեյրութում և Հայկապոլսում ծավալել է թատերական գործունեություն, ղեկավարել Շրջուն թատերախումբը, որը 1987-ին հյուրախաղերով հանդես է եկել նաև Երևանում՝ ներկայացնելով չորս բեմադրություն: Արժանացել է «Ժողովար-

գիսեան» թատերական զույգ մրցանակներին (1986), ինչպես նաև «Վահրիճ եւ Վերժին Գեորգի» (2006), «Գեորգ Մելիտինեցի» (2007), «Ռիչարդ եւ Թիմա Գարոլան» (2017) գրական մրցանակներին: Հեղինակ է մոտ հիսուն թատերգությունների, որոնց զգալի մասը բեմ է բարձրացել իր իսկ բեմադրությամբ: Ատրունու թատերախաղերից մի քանիսը բեմադրվել են արաբերեն լեզվով:

Թուրքը մտավ Շուշի: Պղծվեցին մեր ժողովրդի հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային խոշոր կենտրոններից մեկի սրբությունները: Ակամա մտաբերում ես 100 տարի առաջ կատարված ողբերգական իրադարձությունները: Մի՞թե կրկնվեց 1920 թ. Կարսի և Ալեքսանդրապոլի անկման սցենարը: 1920 թ. մարտին թուրք-ադրբեջանական զորքերն ավերեցին հնօրյա բերդաքաղաք Շուշին ու կոտորեցին հայ ազգաբնակչությանը: Այդ մասին կան բազում վկայություններ, գրվել են հոդվածներ, եղել են իրապարակումներ հայ և օտարազգի բազմաթիվ մտավորականների կողմից: Այսպես, օրինակ, իտալացի պատմաբան, աստվածաբան, գրող ու թարգմանիչ Ջովաննի Գուայտայի «Ճիշ Արարատից. Արմին Վեզները և հայերի ցեղասպանությունը» գրքում կարդում ենք. «1920 թ. մարտին թուրքերը և ադր-



ՕՍԻՊ ՄԱՆԴԵԼՇՏԱՄԸ ՀՈՒՇԻՈՒՄ

բեջանցիները կատարում են նոր սարսափելի ջարդ Շուշի քաղաքում: Շուշին Ղարաբաղում հայկական կյանքի շատ կարևոր մշակութային կենտրոն էր: XIX դարից այն ուներ իր վանքը, իր եկեղեցին, թատրոնը, հիվանդանոցը, թեմական դպրոցը, լույս էին տեսնում հայերեն գրքեր և ամսագրեր: XIX դարի վերջին հայերը կազմում էին քաղաքի բնակչության ավելի քան 60 տոկոսը: Ընդամենը մեկ օրում՝ 1920 թ. մարտի 22-ին, թուրքական կատաղությունը քայքայեց հազարավոր հայկական տներ, ավերեց շատ եկեղեցիներ, գրադարաններ, տպարաններ. դրա զոհը դարձավ ավելի քան 30.000 մարդ: Այդպես բեմականները Շուշիում կրկնեցին այն, ինչ երիտթուրքերը կատարել էին Բաքվում (նկատի ունի Բաքվի 1918 թ. սեպտեմբերյան դեպքերը. — Ա. Զ.):»:

Խոսում են նաև ռուս նշանավոր բանաստեղծ, արվեստի տեսաբան ու թարգմանիչ Օսիպ Մանդելշտամի (1891–1938) ու նրա կնոջ՝ Նադեժդա Մանդելշտամի (օրիորդական ազգանունը՝ Խազինա) հայտնի անդրադարձներն այդ ողբերգական իրադարձություններին: 1929 թ. հունիսի 14-ին Կոմիտերնի նախագահ և «Իզվեստիա» թերթի գլխավոր խմբագիր Ն. Ի. Բուխարինը հետևյալ նամակն է գրել ՅՍՄՄ Ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Փարիեյանին: «Թանկագին ընկ. Տեր-Փարիեյան, մեր խոշոր բանաստեղծներից մեկը՝ Օ. Մանդելշտամը, ցանկություն ունի Յայաստանում մշակութային բնույթի աշխատանք ստանալու (օր.՝ հայկական արվեստի, մասնավորապես գրականության պատմության հետ կապված կամ նման մի բան), — հայտնում է նամակագիրն ու ավելացնում. — Նա շատ կրթված մարդ է և կարող է ձեզ մեծ օգուտ բերել: Նրան պետք է միայն հանգիստ թողնել մի որոշ ժամանակ և աշխատելու հնարավորություն տալ: Կարող է գործ գրել Յայաստանի մասին: Պատ-

րաստ է սովորել հայոց լեզուն ...»:

Օ. Մանդելշտամի այդ ցանկությունն ամենևին պատահական չէր, քանզի 1910-ական թվականների վերջերից — 1920-ական թվականներին ծանոթ է եղել հայ իրականությանը (չժալվելով՝ նկատենք, որ 1920 թ. աշնանը մի որոշ ժամանակ եղել է Թիֆլիսում, ապա Մոսկվայում շփվել հայ մտավորականության հետ), գիտեր մեր ժողովրդի անցյալն ու ներկան:

Հայտնի իրողություն է, որ 1930 թ. մայիսից մինչև հոկտեմբերի կեսը Օ. Մանդելշտամը ապրում ու գործում է Յայաստանում՝ ցուցաբերելով մեծ հետաքրքրություն Յայաստանի և հայ մշակույթի հանդեպ, այցելում պատմաճարտարապետական հուշարձանները, մտերմանում հայ իրականության նշանավոր դեմքերի հետ: Փորձում է սովորել զրաբար, որոշում գրել «Արշակ և Շապուհ» թեմայով գործ: Օ. Մանդելշտամի կինը Յայաստան գալու կապակցությամբ գրում է. «Մանդելշտամի համար Յայաստան գնալը վերադարձ էր դեպի հարազատ եզերք՝ դեպի վայրն այն, ուր սկզբնավորվել էր ամենայն ինչ, հայրերի մոտ՝ դեպի ակունքը: Տևական լուրջությունից հետո, բանաստեղծությունները նրան վերադարձան Յայաստանում և այլևս երբեք չլքեցին ...»:

Օ. Մանդելշտամը Յայաստանից Թիֆլիս վերադառնալիս՝ Շուշիի 1920 թ. մարտյան կոտորածներից 10 տարի անց լինում է ավերված քաղաքում: Շուշիից ստացած սահմեկեցուցիչ տպավորությունների ու դրա ազդեցության տակ բանաստեղծի գրած հայտնի «Ֆայտոնջին» բանաստեղծության մասին Ն. Մանդելշտամն իր հուշերում ունի ուշագրավ տեղեկություններ: Փոքր-ինչ ծավալուն այդ հատվածը բերենք ամբողջությամբ. «... վերջին մեկնումը երիվանից, Յայաստանում մեր ճամփորդության ավարտը: Լուսաբացին մենք ավտոբուսով Գյանջայից (Գանձակից. — Ա. Զ.) մեկնեցինք Շուշի:

Քաղաքն սկսվում էր անվերջանալի գերեզմանոցով, ապա՝ փոքրիկ շուկայի հրապարակն էր, ուր իջնում են հոշոտված քաղաքի փողոցները: Մեզ արդեն վիճակված էր տեսնել բնակիչների կողմից լքված գյուղեր, որ մի քանի կիսաքանդ տներից էին բաղկացած, բայց երբեմնի, ինչպես երևում էր, հարուստ և բարեկարգ այս քաղաքում աղետի ու մորթի պատկերները սուսկալիորեն դեռ աչքի առաջ էին: Մենք անցանք փողոցներով, և ամենուրեք մույնը՝ ամտամիք, անլուսամուտ, անդուռ տների երկշարը: Լուսամուտների բացվածքներից երևում էին դատարկ սենյակները, երբեմն՝ պաստառների ծվեմներ, կիսաքանդ վառարաններ, երբեմն՝ ջարդուփշուր կահույքի մնացորդներ: Տները նշանավոր վարդագույն տուֆից էին, երկհարկանի: Բոլոր միջնորմները քանդված էին, և այդ կմախքների արանքից ամենուր թափանցում էր կապույտ երկինքը: Ասում են, թե կոտորածից հետո բոլոր ջրհորները լեփեցուն են եղել դիակներով: Եթե որևէ մեկը ողջ է մնացել, ապա փախել է մահվան այդ քաղաքից: Բոլոր լեռնակա ճանապարհներին մենք ոչ մի մարդու չհանդիպեցինք: Միայն ներքևում, շուկայի հրապարակում, զեռում էր մի խումբ ժողովուրդ, բայց նրանց մեջ՝ ոչ մի հայ, միայն մուսուլմաններ: Օ. Մ.-ի տպավորությունն այն էր, թե շուկայի մուսուլմանները՝ այն մարդասպանների մնացուկներն են, ովքեր մի տասը տարի առաջ ավերել են քաղաքը, միայն թե դա նրանց օգուտ չտվեց, արևելյան թշվառություն, հրեշավոր ցնցոտիներ, դեմքերին՝ թարախածոր պալարներ: Եգիպտացորենի ալյուրի, կողրի, բլիթների առևտուր ... մենք չհամարձակվեցինք բլիթներ գնել այդ ձեռքերից, թեև ուտել էինք ուզում ... Եվ ջուր էլ չես խմի այս ջրհորներից ... Քաղաքում ոչ միայն հյուրանոց չկար, այլ մույնիսկ եկվորների համար «օբշչո» կոչվող սենյակներ,

ուր կանայք ու տղամարդիկ միասին էին քնում: Գյանջայի ավտոբուսը մեկնում էր առավոտյան ... Մեզ առաջարկեցին գիշերել իրենց մոտ, բայց ես վախենում էի արևելյան թարախապալարներից, իսկ Մանդելշտամը չէր կարողանում վանել այն միտքը, թե մեր դիմաց ջարդարարներ ու մարդասպաններ են: Մենք որոշեցինք մեկնել Ստեփանակերտ՝ մարզային քաղաք: Այնտեղ հասնել կարելի էր միայն կառքով: Ահա և մեզ հանդիպեց անքիթ մի կառավար, միակը իջևանատնում, կաշվե դիմակաչուկով, որը ծածկում էր նրա քիթը և դեմքի կեսը: Իսկ հետո ամեն ինչ ճիշտ այնպես էր, ինչպես բանաստեղծության («Ֆայտոնջին» — Ա. Զ.) մեջ է. և մենք չէինք հավատում, թե նա մեզ իրոք կհասցնի Ստեփանակերտ. մենք անցանք տուն դարձող հոտից: Այնտեղ մենք գիշերեցինք «օբշչոյում», իսկ առավոտյան առանց դժվարության ավտոբուսի տոմս ստացանք (մարզկոմի միջոցով) և վերադարձանք Գյանջայի թե Նուխու երկաթուղի:

Շուշիի մասին բանաստեղծությունը գրվեց Մոսկվայում 31 թվի ամռանը (հունիսի 12-ին. — Ա. Զ.) ... Նրա թեման կառապան է, որն անհայտ է, թե ուր է տանում, — ժանտախտի նախագահը, դիմակավոր մի ոմն, ումից կախված ենք մենք ... Մանդելշտամը վաղուց նկատել էր, որ մենք ոչինչ չգիտենք նրանց մասին, ումից կախված է մեր ճակատագիրը ...

Բանաստեղծությունը ծնվեց մասնավոր դեպքից և ավելի լայն զուգորդությունից՝ այդտեղ է նրա իմաստը: ...»:

Հավելենք. Յայաստանից վերադառնալով Թիֆլիս՝ 1930 թ. հոկտեմբերի 16-ից նոյեմբերի 5-ը Օ. Մանդելշտամը գրում է «Յայաստան» շարքը՝ բաղկացած 13 բանաստեղծությունից: Դրանցում անդրադարձ կա հայոց լեզվին ու մշակույթին, Յայաստանի պատմությանը, նրա ազդեցությունը եվրոպական մշակույթի վրա, նաև փառաբանում է հայ աշխատավորին: 1931–1932 թթ. էլ գրում է «Ճանապարհորդություն Յայաստանում» արձակ գործը: Ռուս բանաստեղծի համար Յայաստանը «Երկրի գիրքն է ... որով սովորել են առաջին մարդիկ»:

Ստորև բերենք մի խոսուն հատված «Ֆայտոնջին» բանաստեղծությունից (թարգմ.՝ Զր. Բեյլերյանի).

... Ես Ղարաբաղը տեսա լեռնային,
Տեսա գիշատիչ Շուշի քաղաք,
Ուր ճաշակեցի սարսափներ մահի —
Հոգուս խռովքին համանվագ:

Քառասուն հազար մեռյալ լուսամուտ,
Ակնախոռոչներ մութ, սնամեջ.
Դառը տքմանքի բոժոժը հմուտ
Թաղված էր այնտեղ՝ լեռների մեջ:

Անամոթաբար շառագունում են
Մերկ տներն ու վեր նայում անթարթ,
Երկինքը վերից մեզն իր մանում է,
Որպես մուգ-կապույտ ոմն ժանտախտ:

Անուշավան ՉԱԲՐԱՅԱՆ
«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ

Զգաստության, արիության և միասնականության

Անցնող քառասունչորս օրերը մեր ազգի համար հոգեկան ծանր ապրումների ժամանակաշրջան դարձան՝ լի մտահոգությունների, ցասման, հուսահատության և տխրության խառը զգացմունքներով: Այսօր կողմնորոշվելու և մեր հետագա անելիքները նախանշելու այս հանգրվանը կարող է վախազդու թվալ, սակայն նման պահերին է, որ հայը դրսևորում է իր նկարագրի ամրությունն ու կամքի տոկունությունը:

Մենք մահը հաղթող ժողովուրդ ենք: Մեր գոյության հազարամյակների ընթացքում սովորել ենք գոյատևել ու մեր հոգեկան հզորությամբ դիմակայել ամեն տեսակի խոչընդոտներին և մեզ ընկճել ցանկացող ուժերին: Քաղաքակրթության մեջ մեր թողած ժառանգությունը նշանավորվում է բազմաթիվ ու հարատև ձեռքբերումներով:

Այսպիսի պահերին, երբ մեզ կոտրված ենք զգում, պետք է հետ նայենք մեր պատմությանը և քաջալերվենք մեր գոյության, տոկունության և կենսունակության ամենապայծառ օրինակներով:

Քառասունչորս օր շարունակ, հայությունը մոլորակի բոլոր անկյուններում միաձուլեց իր ներուժն ու կամքը և լսելի դարձրեց իր ձայնը: Անժանոքները միասնական պայքարի գորակիցներ և գործակիցներ դարձան: Մեր հայրենիքի դեմ թշնամու նեմզ հարձակումը համախմբեց մեզ՝ ձերբազատելով մեր համայնքները պառակտող տարածայնություններից: Այս իրողությունն է, որ պիտի մղի մեզ կերտելու մեր պատմության մոր էջը: Այս մոր հանգրվանին մենք պիտի շարունակենք գործել միասնաբար՝ հաղթահարելով բոլոր խոչընդոտները: Մեզնից յուրաքանչյուրն իր նպաստը պիտի բերի մեր և մեր ժողովրդի վերքերի բուժմանն ու մեր երկրի վերակառուցմանը:

Մենք պետք է խաղաղությամբ տոգորենք մեր սրտերն ու համախմբվենք ազգաշինության և պետականաշինության ոգով: Սա է մեր պարտքը այն բոլոր հերոսների հանդեպ, որոնք իրենց կյանքը զոհաբերեցին, կամ որոնք վիրավոր և դեռևս ապաքինվում են և կամ նրանց, ում սրտերը դեռևս կսկիծում են:

Յայաստանն այսօր ունի բոլորիս կարիքը: Արցախն է կանչում մեզ: Ավելի քան երբևէ մենք պետք է մեկտեղենք մեր ուժերը:

Կոչ ենք անում մեր ազգի բոլոր նվիրյալներին՝ Յայաստանում և Յայաստանից դուրս ապրող ու գործող անհատներին, մարդասիրական, ընկերային և քաղաքական կազմակերպություններին ու կուսակցություններին՝ միավորվել և ոտքի կանգնել, քանի որ առաջիկա օրերին մեզ կրկին մարտահրավերներ են սպասվում:

ՀԲԸՄ-ն այստեղ է և պատրաստ է ծառայել: Պատրաստ է գործակցել և վերակառուցել: Պատրաստ է աջակցել պետականության հիմքերի ամրապնդմանը: Պատրաստ է աջակցել մեր ժողովրդին, մեր հաստատություններին, մեր կառավարությանն ու մեր եկեղեցուն և առաջնորդել, ըստ անհրաժեշտության, ապագային միտված մեր միասնական ճանապարհին:

Միությունը գործություն է:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Մոլորակի գիտնականների կողք համաշխարհային կառույցներին՝ փրկելու հայկական ժառանգությունը՝

ՔԱՆԻ ԴԵՌՈՒ ՈՒՇ ԶԷ



➤ Մայր տաճարը, որը գտնվում է Արցախի մշակութային մայրաքաղաք Շուշիում, 19-րդ դարի հայկական ճարտարապետության գլուխգործոց է, հայկական մշակութային և կրոնական ինքնության կոթող: Առցանց լուսանկարներում երևում է մեծ անցք եկեղեցու գմբեթում, հատակը և նստարանները ավերակույտների մեջ են:

Շուշիի տաճարը միայն մեկն է Արցախի մշակութային ժառանգության այն հազարավոր հաստատություններից, որոնք այժմ լուրջ վտանգի տակ են: Կառույցների մեծ մասը շատ ավելի հին են, որոշները թվագրվում են մեր թվարկության չորրորդ դարին, երբ Հայաստանն ընդունեց քրիստոնեությունը: Այս յուրօրինակ ճարտարապետական հուշարձանների վրա կան հին արձանագրություններ, որմնանկարներ և քանդակներ: Դրանք ոչ միայն գեղարվեստական ?? և պատմական հարստություններ են, այլև իրենց անկասկածաբար տարածաշրջանում հայերի երկարատև պատմության մասին: Յուրաքանչյուր կասեցության ռուբրիկի հետ, միջազգային հանրության լուրջ և անգործության յուրաքանչյուր ժամի հետ մենք կորցնում ենք մի թանկարժեք հուշարձան՝ մեկընդմիջում ոչնչացող:

Ռմբակոծությունները միջոցով թիրախավորվել են նաև հնավայրերը՝ վնաս հասցնելով հնագույն բնակավայրերին, ներառյալ ամրոցներին, եկեղեցական ճարտարապետությանը և արժեքավոր գտածոներին:

Լայնամասշտաբ այս ոչնչացումը Ադրբեջանի վայրագ ժխտողական քաղաքականության մի մասն է, որը ներառում է Արցախում հայկական

մշակութային ժառանգության կանխամտածված վերացումը: Ե՞վ Ադրբեջանը, և՛ Թուրքիան վարում են իրենց տարածքներում գտնվող հայկական մշակութային ժառանգության ոչնչացման շարունակական, լավ փաստագրված քաղաքականություն: Այս առումով հարկ է հիշատակել 1997-2006 թթ.-ին Ադրբեջանի կողմից Նախիջևանում ոչնչացված տեղի հայկական մշակույթը՝ ավելի քան 89 միջնադարյան եկեղեցի, 5840 խաչքար և 22000 պատմական տապանաքար: Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհրդի (ICOMOS) 16-րդ Գլխավոր ասամբլեան 2008 թ.-ի հոկտեմբերին որոշում ընդունեց, որում իր խիստ մտահոգությունն էր հայտնում մշակութային վանդալիզմի այս գործողությունների առնչությամբ: Ի հակադրություն այդ ամենի, ուշադրություն ենք հրավիրում Շուշիի Գոհար աղա մզկիթը վերականգնելու Հայաստանի ջանքերի վրա:

Արդյո՞ք Փանծասարի վանքը, 13-րդ դարի հայկական ճարտարապետության գոհարը, դատապարտված է նման մոռացության: Իսկ 4-րդ դարի Ամարասի վա՞նքը, որտեղ գտնվել է առաջին դպրոցը որտեղ օգտագործվել է հայոց այբուբենը և Հայաստանի հովանավոր սրբի և ավետարանչի՝ Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Սուրբ Գրիգորիսի շիրիմը: 5-րդ դարին պատկանող Գրիգորիսի գերեզմանը հայ քրիստոնեական դամբարանային ամենահին պահպանված կառույցներից մեկն է:

Ի՞նչ է լինելու Դադիվանքի՝ 13-րդ դարի մեծ, գեղատեսիլ վանական համալիրի և խաչքարերի հետ: Համալիրի գլխավոր եկեղեցին, իր արտաքին նուրբ

կամարաշարերով և քանդակազարդ դիմապատկերներով, իր հարկի տակ է պահում ներսի որմնանկարների արտասովոր հավաքածու, որտեղ կան սրբազան և պատմական դեմքեր և հայկական արձանագրություններ: Իտալական վերականգնողական թիմի ջանքերի շնորհիվ փորձ էր արվում կայունացնել դրա վատթարացած վիճակը, սակայն նրանց իրականացրած աշխատանքները անհետ կորելու անմիջական սպառնալիքի տակ են գտնվում:

Սրանք ընդամենը մի քանի օրինակներ են Արցախի ամբողջ տարածքում գտնվող հազարավոր հուշարձանների, որոնք այժմ ոչնչացման վտանգի տակ են գտնվում: Երբ նրանք վերանան, արդեն ուշ կլինի: Մենք գիտակցում ենք մշակութային ժառանգության արժեքը և հասկանում, որ որևէ մշակութային ժառանգության կորուստը աշխարհի բոլոր ազգերի ժառանգության աղքատացումն է, և ոչ թե միայն այն ազգի, որին պատկանում է մշակութային տվյալ հուշարձանը: Մենք կոչ ենք անում ՅՈՒՆԵՍԿՕ-ին, ԻԿՕՍՕՍ-ին, «Կապույտ վահանին» (The Blue Shield), Համաշխարհային հուշարձանների ֆոնդին (World Monuments Fund) և մշակութային ժառանգության հուշարձանների պահպանման և պաշտպանությամբ զբաղվող այլ միջազգային կազմակերպություններին անհապաղ աջակցել այդ հուշարձանների պահպանության և մոնիթորինգի և հետագա սերունդների համար դրանք փաստագրելու հարցում:

Պրոֆ. Քրիստինա Մարանչի, Թաֆթսի համալսարան (ԱՄՆ)
 Պրոֆ. Թեո Մարթեն վան Լինտ, Օքսֆորդի համալսարան (Մեծ Բրիտանիա)
 Պրոֆ. Էմմա Լուսի, Էքսթերի համալսարան (Մեծ Բրիտանիա)
 Պրոֆ. Իվան Ֆոլետտի, Մասսաչուսեթսի համալսարան (Չեխիա)
 Պրոֆ. Անեմարի Ուելլ Բար, Հարավային մեթոդիստական համալսարան (ԱՄՆ)
 Դոկտոր Սիլվիա Լ. Մերիան, Մորգանի գրադարան և թանգարան (ԱՄՆ)
 Իգոր Դորֆման-Լազարև, Լոնդոնի SOAS համալսարան (Մեծ Բրիտանիա)
 Պրոֆ. Հեղմար Վաթենպուու, Դեյվիս, Կալիֆոռնիայի համալսարան
 Պրոֆ. Ինա Բադդիանց Մաքքեյթ, Թաֆթսի համալսարան (ԱՄՆ)
 Պրոֆ. Սերջիո Լա Պորտա, Կալիֆոռնիայի պետական ??համալսարան, Ֆրեզնո (ԱՄՆ)
 Պրոֆ. Պատրիկ Դոնաթյան, Էքս-Մարսելի համալսարան (Ֆրանսիա)
 S. Կարապետ Քոչակեան, Հայկական եկեղեցու ամերիկայի թեմ (ԱՄՆ)
 Պրոֆ. Էլիզաբեթ Հ. Պրոդրոմու, Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոց, Թաֆթսի համալսարան (ԱՄՆ)
 Պրոֆ. Ալեքսանդրոս Կ. Կիրու, Սալեմի պետական ??համալսարան (ԱՄՆ)
 Պրոֆ. Արա Հ. Մերջյան, Նյու Յորքի համալսարան (ԱՄՆ)
 Պրոֆ. Գրիգոր, Դեյվիս, Կալիֆոռնիայի համալսարան (ԱՄՆ)
 Դոկտոր Ֆելիսիա Հարլի-Մակգոուլան, Յեյլի համալսարան (ԱՄՆ)
 Պրոֆ. Ջառա Պողոսյան, Ֆլորենցիայի համալսարան (Իտալիա)
 Պրոֆ. Էրիկ Թուն, Ռատգերսի համալսարան (ԱՄՆ)
 Պրոֆ. Իոաննա Ռապտի, Բարձրագույն ուսումնական պրակտիկ դպրոց (Ֆրանսիա)
 Պրոֆ. Ռոբերտա Էրվայն, Սուրբ Ներսես սեմինարիա, (ԱՄՆ)
 Պրոֆ. Հայկ Ուտիջյան, Չարլզի համալսարան (Չեխիա)
 Պրոֆ. Վալենտինա Կալցուլարի Բուվիե, Ժնևի համալսարան (Շվեյցարիա)
 Պրոֆ. Ս. Փիթեր Զոուի, Կալիֆոռնիայի համալսարան, Լոս Անջելես (ԱՄՆ)
 Պրոֆ. Ռոբերտ Դուգարյան, Էմերսոն քոլեջ (ԱՄՆ)
 Պրոֆ. Ռեյչել Գոշգարյան, Լաֆայեթ քոլեջ (ԱՄՆ)
 Դոկտոր Ջեֆրի Քլոհա, Աստվածաշնչի թանգարան, Վաշինգտոն (ԱՄՆ)
 Պրոֆ. Լորի Խաչադուրյան, Քորնելի համալսարան (ԱՄՆ)

Դոկտոր Մարկ Մամիգոնյան, Հայ ուսումնասիրությունների և հետազոտությունների ազգային ասոցիացիա (ԱՄՆ)
 Դոկտ. Բորիս Աճեմյան, Փարիզի ՀԲԸՄ Նուբարյան գրադարան (Ֆրանսիա)
 Պրոֆ. Հուրի Բերբերյան, Իրվայնի Կալիֆոռնիայի համալսարան (ԱՄՆ)
 Հաբեմ Ալ-Ռուստոմ, Միչիգանի համալսարան, Էն Արբոր (ԱՄՆ)
 Պրոֆ. Գևորգ Բարդակչյան, Միչիգանի համալսարան, Էն Արբոր (ԱՄՆ)
 Պրոֆ. Թաներ Աքչան, Զլարկի համալսարան (ԱՄՆ)
 Պրոֆ. Վահրամ Շեմսյան, Կալիֆոռնիայի պետական համալսարան, Նորթրիջ (ԱՄՆ)
 Պրոֆ. Բարլուտ Տեր Մուգրդեչյան, Կալիֆոռնիայի պետական համալսարան, Ֆրեզնո (ԱՄՆ)
 Պրոֆ. Մելանի Ս. Դանիելյան, Էն Արբոր (Միչիգանի համալսարան)
 Պրոֆ. Պեդրոս Տեր Մաթոսյան, Նեբրասկա-Լինքոլն համալսարան (ԱՄՆ)
 Պրոֆ. Սիմոն Փայասլյան, Բոստոնի համալսարան (ԱՄՆ)
 Պրոֆ. Ստեֆան Աստուրյան, Կալիֆոռնիայի համալսարան, Բերկլի (ԱՄՆ)
 Պրոֆ. Սալվի Դազարյան, Հարավային Կալիֆոռնիայի համալսարան (ԱՄՆ)
 Պրոֆ. Արա Սանջյան, Միչիգանի համալսարան, Դիրբորն (ԱՄՆ)
 Պրոֆ. Դիքսոն Գուլոմբյան, Կալիֆոռնիայի պետական համալսարան, Ֆրեզնո (ԱՄՆ)
 Պրոֆ. Մայքլ Փիֆեր, Միչիգանի համալսարան, Էն Արբոր (ԱՄՆ)
 Պրոֆ. Թամար Մ. Բոյաջյան, Միչիգանի պետական համալսարան (ԱՄՆ)
 Դոկտոր Լանա Սլուցկի, Ռուսաստանի սրբապատկերների թանգարան (ԱՄՆ)
 Պրոֆ. Պիտեր Բուտենեֆ, Սբ. Վլադիմիրի Ուղղափառ ծեմարան (ԱՄՆ)
 Դոկտոր Վազգեն Դավիդյան, Օքսֆորդի համալսարան (Մեծ Բրիտանիա)
 Դոկտոր Ալիս Սալիվան, Միչիգանի համալսարան, Էն Արբոր (ԱՄՆ)
 Դոկտոր Լորան Դիսարդ, Լոնդոնի համալսարանական քոլեջ (Մեծ Բրիտանիա)
 Պրոֆ. Սեբուհ Ասլանյան, Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարան (ԱՄՆ)
 Պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյան, Կալիֆոռնիայի համալսարան, Լոս Անջելես (ԱՄՆ)
 Պրոֆ. Լիզա Գուլեսերյան, Հարվարդի համալսարան (ԱՄՆ)
 Դոկտոր Լեոն Ավդոյան, Կոնգրեսի գրադարան, Վաշինգտոն (ԱՄՆ)
 Պրոֆ. Մայքլ Սթոուն, Երուսաղեմի Եբրայական համալսարան (Իսրայել)



ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ «ՊԱՊԻԿ ԵՎ ԹՈՌՆԻԿ» ԵՐԿՈՒՄ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ 200-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Բոլոր հայերի սիրելի կաթողիկոս Խրիմյան Հայրիկը (Ամենայն Հայոց կաթողիկոս 1892-1907), որպես իր ազգի հոգսերով մտահոգ առաջնորդ 1894-ին հրատարակել է «Պապիկ և Թորնիկ» ուսուցողական երկը, որն ունի նախ ճանաչողական և երկրորդ՝ դաստիարակչական մեծ արժեք։ Այսօր էլ այդ աշխատասիրության մեջ ներկայացված մեծաքանակ պատվիրանները շարունակում են պահպանել իրենց կրթական ու դաստիարակչական նշանակությունը։

«Պապիկ և Թորնիկ» գրքի առաջին տպագրության տիտղոսաթերթի վրա գրված է. «Գիւղական ժողովուրդի թոռնիկների համար»։ Եվ, իրոք, այդ երկասիրությունը շարադրվել է հատուկ նպատակով. հարկավոր էր ուժեղացնել հայկական գյուղերի բնակիչների կապվածությունը մայր հողի հետ։ Հատկապես խոսքը վերաբերում է Հայաստանի հսկայածավալ Վասպուրական նահանգի բնակչությանը, որոնց մեջ խիստ տարածված էր պանդխտությունը դեպի Պոլիս և Թուրքիայի այլ քաղաքներ։ Հեռատես ազգային առաջնորդին խիստ մտահոգում է այդ իրողությունը, և նա իր աշխատասիրությամբ հստակորեն գործնական հրահանգներ է տալիս նոր բարձրացող հայ սերնդին։

Խրիմյան Հայրիկն իրավացիորեն բացատրում է, թե երկիրը չպետք է ապրի օտար երկրում տքնաջան աշխատանք կատարող պանդխտների հաշվին, այլ սեփական հողը մշակելու շնորհիվ. «Ճշմարիտ է, Թորնիկ, ես փորձով հասկացա, եթե մեք ամենայն հոգով ու սրտով աշխատենք մշակել մեր հողերն՝ կապրենք և երբեք չենք տեսնի պանդխտության երես»։ Նա հավաստում է, թե պանդխտությունից բերած վաստակը մեկ, երկու տարվա մեջ սպառվում է, ու կրկին սկսվում է նույն թշվառությունը։

Երկրագործությունը Խրիմյան Հայրիկը համարում է ամեն ազգի բարեկեցության հիմքը։ Աշխատասիրություն ու երկրագործություն՝ այս կարևոր ու կենսական նախապայմանը որպես բարեկեցիկ կյանքի երաշխիք հատուկ ուսուցանվում է մարդուն դեռևս հազարամյակներ առաջ գրադաշտական կրոնի սրբազան մատյանում՝ «Ավետայում»։ Ահուրա Մազդան

գերագույն աստվածը, Ջրադաշտին ասում է. «Հողն այսպես է ասուս՝ Մարդ, որ ինձ մշակում ես բազուկներով՝ ծախ և աջ, բազուկներով՝ աջ և ծախ,

Ես միշտ կլինեմ բարեգործ այդ տեղանքի համար, ես միշտ կգամ դեպի քեզ։ Ես կբերեմ, բացի դաշտի հատիկեղենից, սնունդ ամեն տեսակի, այն ամենը, ինչ ես կարող եմ բերել։

Նրան, ով չի մշակում հողը՝ Հողն ասում է - Դու, որ ինձ չես մշակում բազուկներով՝ ծախ և աջ, բազուկներով՝ աջ և ծախ։

Դու միշտ կանգնած կլինես ուրիշների դռներին՝ նրանց թվում, ովքեր ուտելիք են մուրում»։

Խրիմյան Հայրիկը, որը հիմնադրել է Վանի Կեդրոնական վարժարանը (1857), Երկրագործական ուսումնարանը (1880), դասավանդել է Վարազա վանքում, իրեն ներկայացնում է երևակայական պապիկ, որը, կենսափորձից ծնված, իմաստուն դաս է տալիս Թորնիկին, որպեսզի վերջինս էլ փոխանցի իր ժառանգներին։

Դասերը Թորնիկին սովորեցնում են ճիշտ ապրելու արվեստը, որի հիմքում խիստ կարևոր է ամեն մարդու ինքնուրույն քայլեր անելու պարտադիր պայմանը։

Պապիկը բացատրում է, թե մարդկությունն ապրում է հացով, ճշմարտությունը Աստված բացատրեց Ադամին, երբ նրան արտաքսեց դրախտից. «Տեր Աստված, երբ մեր հանցավոր նախահայր Ադամը դրախտեն դուրս հանեց, մի պատվեր տվավ ամոր, որ երկիր գործես և պահես և թե յուր երեսի քրտինքով յուր հաց ճարես և ապրի»։

«Պապիկ և Թորնիկ» երկը բաղկացած է 24 (ԻԴ) բաժիններից, որոնք բոլորն էլ ըստ բովանդակության ունեն համապատասխան խորագրեր։

Ողջ երկի շարադրանքում խրախուսվում է աշխատասիրությունը և մատնացույց են արվում նրա բերած առավելությունները։ Հայերի կենցաղավարության լավագույն գծերը փառաբանվում են, խիստ խարազանվում է ծուկությունը։

Հայ մարդուն հատուկ է հյուրընկալ ու մարդասիրական գիծը, և այդ հատկանիշն անհրաժեշտ է մշտապես պահել։

Որպես ճշմարիտ մանկավարժ՝ Խրիմյանն իր աշակերտին բացատրում է, թե սովորելու, որոնելու, ավելին իմանալու ընթացքը մարդուն ուղեկցում է ողջ կյանքում։ Մարդկային կյանքը շարունակական փոփոխությունների ու առաջընթացի մեջ է, և նրանք, ովքեր շարունակում են սովորել և նորացնել կյանքը, հենց նրանք էլ հասնում են հաջողությունների։

Երբեք չպետք է կասեցնել աշխատասիրության եռանդը ու ենթարկվել ծուկությանը, այլապես «աղքատություն արագոտն սուրհանդակի պես շուտ վերա կհասնի»։

Այսօրվա մարդու համար բացառիկ նշանակություն ունեն էկոլոգիական խնդիրները։ Անհեռատես մարդկությունը սպառում է երկրագնդի բնական պաշարները՝ հատկապես անխնա կտրում է անտառների ծառերը, շռայլում խմելու ջրի պաշարները։

Մինչդեռ դեռևս XIX դարի վերջին Խրիմյանը պահանջում է, որ կարելի է կտրել միայն անտառի չորացած ծառերը և դրանց փոխարեն տնկել նորերը, որպեսզի անտառները կորուստներ չունենան։

Այս նկատառումով բերվում է Եվրոպայի զարգացած ազգերի օրինակը, որոնք անտառներում կտրում են ծերա-

իր արտը քաղի իր ձեռքով և ուրիշի օգնությամբ չղիմի։

Մեկ ուրիշ առակ Թորնիկին ուսուցանում է գթասրտություն։ Մի եղնիկի ծագերը քարայրի մեջ մեռնում են։ Վշտահար եղնիկը դուրս է գալիս շրջելու անտառում և գայլի որջում տեսնում է երկու նվաղած գայլի ծագեր, որոնց մայրը չկար ու սկսում է կերակրել նրանց իր կաթով։ Այդ արարքը տեսնելով՝ ճգնավոր մի մարդ եղնիկին հիշեցնում է, թե ապագա գիշատիչ գայլերի է սնում և մի՞թե դա չի գիտակցում։ Սակայն եղնիկն ասում է, որ շարունակելու է սնել, չէ որ շատ մարդիկ էլ, երբ մեծանում են, գայլից ավելի դաժան են դառնում մարդու նկատմամբ։

Խրիմյանը բացատրում է, թե ինչ ասել է քոչվոր ցեղ։ Հայերն իրենց պատմական ընթացքում շատ են տուժել քոչվոր ցեղերից՝ թուրքեր, թաթար-մոնղոլներ, քրդեր։ Այսօրվա դպրոցականն էլ պետք է իմանա քոչվոր ցեղերի կենսակերպի հափշտակիչ բնույթի մասին։ Հատկապես, երբ անցնում է Հովհաննես Թումանյանի համաճարեղ «Հայոց լեռներում» բանաստեղծությունը, որում քոչվոր ցեղերի մասին ասվում է.

Բայց քանի անգամ

շեկ անապատի

Օրդուները սև

Իրարու ետև

Եկան, զարկեցին

մեր քարվանս ազնիվ

Հայոց լեռներում,

Արնոտ լեռներում։

Ազգագրական առումով էլ բազմաթիվ հետաքրքիր դրվագներ ենք հանդիպում «Պապիկ և Թորնիկ» երկում։ Ի՞նչ է թոնիրը, ինչպե՞ս են թխում լավաշ հացը թոնրում, ինչու՞՝ նոր թխած հացը բաժանում են հարևաններին։

Խրիմյանը Պապիկի պատվիրաններով բացատրում է, թե որքան գթասրտորեն է անհրաժեշտ վերաբերվել տնային կենդանիներին։ Նրանց չի կարելի ծեծել, ծանր բեռներ դնել նրանց վրա, ժամանակին անհրաժեշտ է կերակրել և խնամել, ինչպես հարազատին։

Ավանայից հիշում ես Լև Տոլստոյի փոքրիկ պատմվածքը՝ «Պառավ ծին» խորագրով, որը հայերեն է թարգմանել Հովհաննես Թումանյանը։ Այն մանկական վերհուշ է, թե ինչպես եղբայրներով մրցում են ծերացած Սևուկ ամուսնով ծիուն քջելով ու չարչարելով։ Հետո միայն տղան հասկանում է, թե որքան անմարդկային են վարվել ծեր ծիու հետ. «Այն օրվանից ինչ մեծացել եմ, ես միշտ խղճում եմ ծիաներին և երբ տեսնում եմ նրանց չարչարելիս, հիշում եմ պառավ Սևուկին ու պառավ Պիմենին»։

Բնությունը և մարդը միաձուլվ են, ու դա հրաշալի երևում է հայ շինականի աշխատանքային երգերում, որոնցից մի քանիսը Խրիմյանը զետեղում է իր երկում։

Շատ գեղեցիկ է սերմնացանի երգը, որում հայ գեղուկը Աստծուն խնդրում է իր ցանած սերմի դիմաց առատ բերք տա, որպեսզի ինքը կարողանա տալ պետության, եկեղեցու հարկերը, պարտադիր տոկոսները, օգնի աղքատներին և ունենա հյուրընկալ, առատ սեղան։

Այս է օրենք մեր աշխարհին

Մեր նահապետ պապերեն,

Շինականին դուռն է բաց

(Շարունակելի)

Անլիտա ԴՈԼՈՒՍԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱՆ Թղթակից անդամ,

ՀԱՅԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՏՐԵՎԻԶՈՅՈՒՄ

Սեպտեմբերի 18-ին Իտալիայի Տրևի-գո քաղաքում բացվել է «Հայաստան. մի ժողովրդի հետքերը» վերնագրով ցուցահանդեսը՝ «Ֆեդեր Պիացցա Օնլուս» հիմնադրամի նախաձեռնությամբ և Տրևիգո քաղաքի հովանավորությամբ: Այն ներկայացնում է Հայաստանի իրականությունը՝ Ցեղասպանությունից սկսած մինչև դրա բերած հետևանքները:



Ըստ «Նոտիցիե պյուն» լրատվամիջոցի լրագրող Լուչիա Ռուսսոյի՝ «Այն կլինի մի ներածական ուղի դեպի հայ ազգի համալիրությունը՝ նրա պատմության հազարամյա ճանապարհորդության մեջ, որը դարերի ընթացքում ստեղծել է շատ հարուստ մշակույթ: Այն մեզ է հասել վեհության և տառապանքի պատմության միջով, այժմ գուրկ մարդկային և տարած-

քային միասնությունից:

Որո՞նք են պատճառները և ինչպիսի՞ն են առանձնահատկություններն այն քաղաքակրթության, որը լինելով աշխարհում դեռևս ներկա և կենդանի, բախում-նային իրավիճակներ է կրում իր ոչ վաղ անցյալի պատճառով և շարունակում է վառ պահել իր մշակութային և հոգևոր պատմությունը: Առաջին քրիստոնյա երկիրը, որն իր հաստատուն խիղճը կազմավորեց իր կրոնի մեջ, հավատարիմ է մնում ինքնավարության և ազատության սկզբունքներին մուսուլման չլինելով ինքնակառավարման իրավիճակում ու դիմադրելով մշակութային և կրոնական համահարթեցման ճնշումներին:

Ցուցահանդեսը հրավիրում է ձեզ հայտնաբերելու այս եզակի ժողովրդի նշաններն ու հետքերը, որի պատմությունը մտորումի և մոտեցման մի պահ է առաջարկում ներկա աշխարհին»:

Ցուցահանդեսի կազմակերպմանը մասնակցել է Վենետիկի Միսիթարյան միաբանության անդամ հայր Վահան Օհանյանը: Նախատեսվում է պրոֆեսոր Սանդրա Ֆարո Կանցիանի «Հայոց ցեղասպանությունը. երեկվա պատճառներից մինչև այսօրվա հետևանքները» գրքի շնորհանդեսը:


Ա. Բ.

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ

Առաջին անգամ մարդկանց վրա կիրառվել արհեստական եղջերաթաղանթը

Աշխարհում առաջին անգամ CorNeat KPro անվանումով սինթետիկ եղջերաթաղանթը կտեղադրվի Իսրայելի Պետախ-Տիկվա քաղաքում գտնվող «Բեյլինսոն» հիվանդանոցի տասը կույր հիվանդների վրա: Այն մշակվել է Ռաանանայի «CorNeat Vision» ընկերության կողմից:

Նախատեսվում է իմպլանտով փոխարինել դեֆորմացված, վնասված կամ անթափանց եղջերաթաղանթը, և ակնկալվում է, որ այն լիովին կվերականգնի հիվանդների տեսողությունը:



Ամբողջ աշխարհում եղջերաթաղանթի փոխարինումները կուրության հիմնական պատճառն են: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ ամեն տարի գրանցվում է կուրության մոտ 2 մլն դեպք: Աշխարհում ավելի քան 30 մլն մարդու մեկ կամ երկու աչքերը կուրացած են եղջերաթաղանթի վնասվածքների և հիվանդությունների հետևանքով: Միլիոնավոր մարդիկ տառապում են տեսողության վատթարացումից: Եղջերաթաղանթի դոնոր ստանալու հնարավորություն ունեն կարիքավորների մոտ 1.5%-ը:

Արհեստական եղջերաթաղանթի մշակման մի քանի փորձերի արդյունքում չի հաջողվել ստեղծել հուսալի լուծում: Նոր սինթետիկ եղջերաթաղանթը թույլ կտա հիվանդներին լիովին օգտագործել իրենց տեսողությունը:

Սարքի մշակված ոսպնյակներն ապահովում են օպտիկական որակ, որը համարժեք է բնական եղջերաթաղանթին:

Կենդանիների վրա արված բոլոր նախակլինիկական փորձարկումները ցույց են տվել իրենց արդյունավետությունն ու անվտանգությունը: Իմպլանտացիայի գործընթացը պարզ է և տևում է մեկ ժամից էլ պակաս:

Բացի Իսրայելից, այս տարի լրացուցիչ փորձարկումներ են նախատեսվում անցկացնել Կանադայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Չինաստանի և Նիդեռլանդների ութ հիվանդանոցներում:



Գիտնականները հայտնաբերել են մազերի աճի համար պատասխանատու մոլեկուլներ

Ամերիկացի գիտնականները հայտնաբերել են միկրոօրգանիզմ, որը նպաստում է մազերի վերականգնմանը և ապագայում կարող է հիմք դառնալ ճաղատության դեմ դեղամիջոցների մշակման համար: Հետազոտության արդյունքները հրապարակվել են Science Advances ամսագրում:

Վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մազերի ֆոլիկուլները չեն անհետանում ճաղատ հատվածներում, այլ պարզապես սեղմվում են: Գիտնականները կարծում են, որ եթե այդ հատվածներում ակտիվացվեն պապիլա բջիջները, ապա ֆոլիկուլները կարող են վերականգնվել:

Հյուսիսային Կարոլինայի համալսարանի կենսաբանները լաբորատոր փորձարկումներում ԴՍ-բջիջներ են մշակել՝ որոնցում վերստեղծվել է բջիջների բնական միկրոսիստեման:

Մկների վրա կատարված փորձերի արդյունքում գիտնականները դիտարկել են, թե որքան արագ են աճում մազերը կրծողների վրա՝ մշակված DS բջիջներով:

3D DS բջիջներով բուժվող մկների մոտ 15 օրվա ընթացքում ամբողջովին վերականգնվել է մազերի 90%-ը:

«Կերատինային հիմքի վրա 3D բջիջները ցույց են տվել լավագույն արդյունքները, քանի որ կերատինը հանդես է գալիս որպես պաշտպանիչ միջոց», - համալսարանի մամուլի տեղեկագրում մեջբերված է հետազոտության ղեկավար Կե Չենի (Ke Cheng) խոսքը: «Բայց մեզ հետաքրքրում էր նաև, թե ինչպես են DS բջիջները կարգավորում ֆոլիկուլների աճի գործընթացը, ուստի մենք հետևել ենք նաև էկզոսոմներին»:


Էկզոսոմները թաքնված պարկեր են, որոնք կարևոր դեր են կատարում միջբջջային հաղորդակցման մեջ: Այս պարկերը պարունակում են միկրոօրգանիզմներ, փոքր մոլեկուլներ, որոնք կարգավորում են գենի էքսպրեսիան:

Հեղինակներն ուսումնասիրել են միկրոօրգանիզմների կազմը էկզոսոմներում, որոնք ստացվել են ինչպես 2D, այնպես էլ 3D ԴՍ-բջիջներից, և պարզել են, որ մազերի վերականգնման գործում կարևոր դեր է խաղում miR-218-5p մոլեկուլը, որն ամրապնդում է մոլեկուլային ուղի, որն էլ իր հերթին պատասխանատու է մազերի ֆոլիկուլի աճի խթանման համար:

«3D-բջիջների օգտագործմամբ բջջային թերապիան կարող է արդյունավետ միջոց լինել ճաղատության բուժման համար», - ասել է Չենը: «Մոլեկուլները պետք է աճեցնել, պահպանել և ներարկել վնասված հատվածներում»:

Գիտնականները փորձնականորեն հաստատել են, որ miR-218-5p-ի ավելացումը նպաստում է մազերի ֆոլիկուլի աճին: Հեղինակները կարծում են, որ ապագայում նրանց կողմից հայտնաբերված միկրոօրգանիզմների օգտագործումը թույլ կտա ստեղծել կրեմ կամ լոսյոն մազերի վերականգնման և աճի համար:

Արման ՔՈՒՉՈՒԿՅԱՆ



Կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արման Քուչուկյանը

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը խոր վշտով հայտնում են, որ սույն թվականի հոկտեմբերի 30-ին 88 տարեկան հասակում կյանքից հեռացավ հաշվողական մեքենաների, ինֆորմացիոն և ավտոմատ կառավարման համակարգերի բնագավառի անվանի գիտնական, ճարտարագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, Լենինյան և ԽՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր Արման Թազվորի Քուչուկյանը:

Արման Քուչուկյանը եղել է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի գիտական գծով փոխտնօրենը, մույն ինստիտուտի էլեկտրոնային հաշվիչ մեքենաների միացյալ համակարգի գլխավոր կոնստրուկտորը: Նա հեղինակել է 57 գիտական աշխատություն:

Իր բազմամյա գործունեությամբ ակադեմիկոս Արման Քուչուկյանը մեծ ներդրում է ունեցել Հայաստանում հաշվողական տեխնիկայի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման մեջ: 2013 թ.-ին նա արժանացել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալի:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտն իրենց ցավակցությունն են հայտնում անվանի գիտնականի ընտանիքին և գործընկերներին:

**ՀՀ ԳԱԱ նախագահությունը
Երևանի մաթեմատիկական
մեքենաների գիտահետազոտա-
կան ինստիտուտ**

Գիտություն

**Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

**Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24բ,
հեռ. 56-80-14, 077 31 63 76
Դասիչ՝ 69268, գրանցման
վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝
24.11.2020 թ.:**

"ГИТЮТЮН" ("Наука") газета НАН РА